

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ
ԺԱՄԸ 10:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ
ԱԿՏԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Խորհրդի անդամներ՝

- Ա. Ղարիբյան ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական
- Վ. Գաբրիելյան ՀՀ ֆինանսների նախարար
- Հ. Թովմասյան ՀՀ արդարադատության նախարար
- Տ. Դավթյան ՀՀ Էկոնոմիկայի նախարար

Մասնակիցներ՝

- Ա. Գևորգյան ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
- Ա. Երիցյան ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար
- Ա. Ասատրյան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
- Դ. Դումանյան ՀՀ առողջապահության նախարար
- Ա. Հարությունյան ՀՀ բնապահպանության նախարար
- Դ. Սարգսյան ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
- Ա. Մարտիրոսյան ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի նախագահ
- Կ. Մինասյան ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
- Ա. Ավետիսյան ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
- Կ. Արեյան Երևանի քաղաքապետի տեղակալ
- Ս. Աֆյան ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ

| | |
|------------------|--|
| Վ. Միրումյան | «Հ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ |
| Վ. Կտիկյան | «Հ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի պաշտոնակատար |
| Հ. Բերբերյան | «Հ վարչապետի օգնական |
| Հ. Նավասարդյան | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վարչության պետ |
| Ա. Հարությունյան | «Հ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության առաջատար մասնագետ |
| Վ. Ասլանյան | «Հ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետ |
| Ա. Եղիազարյան | «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրենի պաշտոնակատար |
| Վ. Չիբուխչյան | «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի բաժնի պետ |
| Գ. Գևորգյան | «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի քաղաքականության և իրավական ակտերի մշակման բաժնի իրավաբան |
| Թ. Մինասյան | «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի հասարակայնության հետ կապերի պատասխանատու |

1. Մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացում

(Ա. Եղիազարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Եղիազարյանին՝

1) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և մյուս շահագրգիռ մարմինների ղեկավարների համապատասխան տեղակալների հետ համատեղ քննարկել «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի փոփոխության հետ կապված հարցերը և հաջորդ նիստին ներկայացնել վերջնական փոխհամաձայնեցված առաջարկ.

2) սպիտակ և դեղին հիմնագույնի համարանիշների փոփոխման գործընթացի համար սահմանել եռամսյա ժամկետ:

2. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումների իրականացում

(Ա. Եղիազարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Եղիազարյանին՝ լրամշակել «ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղեվորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» N 762 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը՝ ընդունելով Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկը:

3. Բեռնափոխադրումների իրականացում

(Ա. Եղիազարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ բեռնափոխադրումների վերաբերյալ փաթեթը ներկայացնել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը՝ հաշվի առնելով ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի առաջարկությունները:

4. Ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ, էլեկտրոտրանսպորտ և երկաթուղի

(Ա. Եղիազարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) մերժել Ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ, էլեկտրոտրանսպորտ և երկաթուղու վերաբերյալ ներկայացված ներկայացված առաջարկությունը.

2) հանձնարարել «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Եղիազարյանին՝ երկաթուղային ենթակառուցվածքների վերաբերյալ առաջարկությունը ներկայացնել ՀՀ հանրային ծառայությունները

կարգավորող հանձնաժողով՝ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ